

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՃԱՆՑ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Կալանավորված անձանց և դատապարտյալներին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով երաշխավորվում է անհետաձգելի, արտահիվանդանոցային և հիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումը:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական օգնությունն իրականացվում է օրենսդրությանը համապատասխան:

Յուրաքանչյուր անձ իրավունք ունի մատչելի ձևով ստանալ տեղեկատվություն իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Դուք իրավունք ունեք իրազեկվելու Ձեր նկատմամբ իրականացվելիք բժշկական միջամտությունների վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, Դուք կարող եք համապատասխան քրեակատարողական հիմնարկի բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող անձնակազմից ստանալ տեղեկատվություն՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, հեպատիտների, տուբերկուլոզի, թմրամոլության և այլ հիվանդությունների բուժման վերաբերյալ:

ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ

Ազատազրկման վայրում Դուք պարտավոր եք ապահովել Ձեր և մյուսների անվտանգությունը: Դրա համար կարևոր է իմանալ Ձեր՝

➤ **ՄԻԱՎ/ՁԻԱՀ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.**

Արյան հետազոտության միջոցով Դուք կարող եք տեղում անցնել թեստավորում: Ցանկալի է յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անցնել հետազոտություն:

➤ **ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՋԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ**

Ազատազրկման վայրում հայտնվելուց հետո յուրաքանչյուր 6 ամիսը մեկ ցանկալի է անցնել ռենտգեն հետազոտություն: Ուշացած փուլում հայտնաբերված տուբերկուլոզի բուժումն ավելի է բարդանում և կարող է բերել անդառնալի հետևանքների:

➤ **ՎՆԱՍԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ**

Եթե ցանկանում եք հրաժարվել թմրանյութերի օգտագործումից (գործածումից), ապա կարող եք ընդգրկվել մեթադոնային փոխարինող բուժման ծրագրում:

ԲՈՒԺՈՒՄ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ

- Եթե ունեք առողջական գանգատներ և կարիք ունեք բուժանձնակազմի ընդունելության, ապա Դուք կարող եք լրացնել Ձեզ մոտ եղած «բուժանձնակազմի ընդունելության թերթիկը» և միջին բուժանձնակազմի համայնքի ընթացքում փոխանցեք նրանց:

- Միջին բուժանձնակազմը սահմանում է բժիշկ-մասնագետի մոտ այցելության հերթականությունը՝ հաշվի առնելով բժշկական օգնության անհետաձգելիությունը:

- Անհետաձգելի բժշկական օգնությունը տրամադրվում է օրվա ցանկացած ժամի:

- Բացառությամբ անհետաձգելի դեպքերի համար նախատեսված դեղամիջոցների՝ Ձեզ մոտ չպետք է լինեն այլ դեղամիջոցներ:

- Քրեակատարողական հիմնարկի ստացիոնար կարող են ընդունվել միայն այն հիվանդ կալանավորված անձինք կամ դատապարտյալները, որոնք ունեն հիվանդանոցային բժշկական օգնության կարիք և առկա է համապատասխան եզրակացությունը և ուղեգիրը:

- Եթե Ձեզ մոտ հաստատված է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դրական կարգավիճակ, ապա հակառետրովիրուսային բուժումը կօգնի Ձեզ ունենալ լիարժեք կյանք:

- Տուբերկուլոզի բուժումը անտեսել և հետաձգել չի կարելի: Բուժումը անվճար է և հասանելի է ազատագրվման վայրերի բժշկական ստորաբաժանումներում:

- Դուք իրավունք ունեք պահանջել բժշկի օգնությանը դիմելու փաստի, Ձեր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

Պահպանե՛ք Ձեր առողջությունը: